

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ
ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Կոնկրետ պետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրացումը հավուր պատշաճի ընկալելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում դրա կառավարման ձևի ուսումնասիրության արդյունքներով համակարգված լուծումներ առաջադրելը, քանզի հենց կառավարման ձևի միջոցով են տեսանելի դառնում պետական մեխանիզմի գործառնության առանձնահատկությունները: Արդի պայմաններում, ելնելով կառավարման ձևից, պետությունների ավանդական դասակարգումը միապետությունների և հանրապետությունների դեռևս բավարար չէ, քանզի վերջիններս կարող են հիմնված լինել ինչպես մենիշխանության, այնպես էլ իշխանությունների բաժանման սկզբունքի վրա: Այդ սկզբունքի վրա հիմնված կառավարման ձևերը, թերևս, նպատակահարմար է բաժանել երեք խմբի՝ *դուալիստական, խորհրդարանական և խառը*²: Դրան-

¹ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ն. Ա. Այվազյան:

² Գրականության մեջ կարծիք է արտահայտվում, որ դրանք հանդիսանում են իրավական պետությանը ներհատուկ կառավարման ձևեր, քանի որ իշխանությունների բաժանումը իրավական պետության հատկանիշ է: Միաժամանակ, ոչ իրավական պետությունում գործում է մենիշխանության սկզբունքը, որին համապատասխան, ոչ իրավական պետության կառավարման ձևերը ևս հանդիսանում են մենիշխանական: Ընդ որում՝ դա վերաբերում է ինչպես միապետությանը, այնպես էլ հանրապետությանը: Տե՛ս **Калинович А. Э.**, *Формы правления в правовом государстве (теоретико-правовой аспект)*, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Санкт-Петербург-2008, էջ 64, 65:

Ժամանակակից մենիշխանական հանրապետություն է Կորեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետությունը (Հյուսիսային Կորեան): Տե՛ս, օրինակ, **Григонис Э. П.**, **Григонис В. П.**, *Конституционное право зарубежных стран*, СПб., 2002, էջ 61:

ցից յուրաքանչյուրն ունի տարատեսակ դրսևորումներ՝ դուալիստական միապետություն, դուալիստական կամ նախագահական հանրապետություն, խորհրդարանական միապետություն կամ հանրապետություն, կիսանախագահական հանրապետություն և այլն: Կախված այն հանգամանքից, թե ինչ համամասնություններով է գործադիր իշխանությունը բաշխված պետության նախագահի և կառավարության միջև, առանձնացվում են կիսանախագահական կառավարման ձևի երկու մոդելներ՝ նախագահական-խորհրդարանական և խորհրդարանական-նախագահական:

2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահական կառավարման ձևի նախագահական-խորհրդարանական մոդելից, ըստ էության, անցում կատարեց խորհրդարանական-նախագահական մոդելին՝ պայմանավորված առավելապես այն հանգամանքներով, որ Սահմանադրությամբ, մասնավորապես, ամրագրվեցին Հանրապետության Նախագահի կողմից Ազգային ժողովն արձակելու հիմքերը, մեծացավ խորհրդարանական մեծամասնության դերակատարությունը ինչպես կառավարության կազմավորման, այնպես էլ դրան անվտանգություն հայտնելու գործընթացներում: Մասնավորապես, Հանրապետության Նախագահն այլևս օժտված չէ վարչապետին սեփական հայեցողությամբ զբաղեցրած պաշտոնից ազատելու լիազորությամբ:

Հայաստանի Հանրապետությունում գործող կառավարման ձևը սահմանադրական գործող կարգավորումների շրջանակներում, մեր կարծիքով, հնարավոր չի դարձնում Սահմանադրությամբ ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ իրացումը՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոններով: Այս կապակցությամբ, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրացման ոլորտներում առկա խնդիրները, դրանց լուծման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև հնարավոր այլընտրանքն արտացոլված են Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձ-

նաժողովի կողմից մշակված Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում³:

Սերկա գիտական հոդվածում խնդիր չենք դրել քննարկման առարկա դարձնել կառավարման բոլոր հիմնական ձևերը: Նկատի ունենալով, որ սահմանադրական առաջիկա փոփոխությունների համատեքստում շեշտադրումը կատարվում է կառավարման գործող ձևի բարելավման և, որպես դրան այլընտրանք, խորհրդարանական կառավարման ձևին անցման նպատակահարմարությանը, ուստի կփորձենք վերլուծել կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերի առավելություններն ու թերությունները և հաշվի առնելով արտասահմանյան մի շարք պետություններում խնդրո առարկայի հետ կապված սահմանադրական զարգացումների արդի միտումները՝ առաջադրել հնարավոր լուծումներ:

«Կիսանախագահական հանրապետություն» (կիսանախագահական ռեժիմ) արտահայտությունն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել ֆրանսիացի սահմանադրագետ Մ. Դյուվեր-ժեի կողմից⁴: Կիսանախագահական հանրապետության հիմնական բնորոշ գծերն են պետության նախագահի ընտրությունն անմիջականորեն ժողովրդի կողմից (ինչպես նախագահական հանրապետությունում), կառավարության, որպես գործադիր իշխանության կոլեգիալ մարմնի, ղեկավարի պաշտոնի առկայությունը (ինչպես խորհրդարանական հանրապետությունում), կառավարության կազմավորումը

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, Երևան, հոկտեմբեր 2014: Դրանում, մասնավորապես, արդարացիորեն փաստվում է. «Մեզանում առկա հիմնախնդիրները պայմանավորված են ինչպես կառավարման ձևի առանձնահատկություններով, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացմամբ, համակարգային առումով ոչ կատարյալ լուծումներով, այնպես էլ քաղաքական և սահմանադրական մշակույթի ցածր մակարդակով, կուսակցական համակարգի ոչ բավարար կայացվածությամբ: Սահմանադրական մակարդակում «գործառնություն-ինստիտուտ-լիազորություն» եռամիասնական շղթայում դեռևս երաշխավորված չէ անհրաժեշտ ներդաշնակություն: Մինչդեռ առանց դրա չի կարող ապահովվել նաև գործառնության, հակակշռող և զսպող լիազորությունների ցանկալի հավասարակշռություն: Վերջինիս բացակայությունը մեծապես վտանգում է երկրի կայուն զարգացումը, պետական իշխանության իրականացման ոլորտում հանգեցնում է ստվերային հարաբերությունների և սուբյեկտիվ հայեցողության շրջանակների վտանգավոր ընդլայնման» (2.4.1):

⁴ Sté u Duvcrger M. A. Institution politiques et droit constitutionnel. Paris, P. 1970; New Political System Mode // European Journal of Political Research. Vol. 8. 1980. N 2, էջ 165, 168:

պետության նախագահի և խորհրդարանի կողմից՝ համատեղ, գործադիր իշխանության իրականացումը պետության նախագահի (ինչպես նախագահական հանրապետությունում) և կառավարության կողմից (ինչպես խորհրդարանական հանրապետությունում). կառավարության ընդհանուր ղեկավարման իրականացումը պետության նախագահի, իսկ անմիջական ղեկավարումը՝ կառավարության ղեկավարի կողմից, ինչպես նաև կառավարության երկակի պատասխանատվությունը պետության նախագահի և խորհրդարանի առջև:

Կիսանախագահական կառավարման ձևին ներհատուկ է ինչպես պետության գլխի՝ նախագահի, այնպես էլ օրենսդիր մարմնի ընտրությունն անմիջականորեն ժողովրդի կողմից, ինչը հավասար չափաբաժնով լեգիտիմությամբ է օժտում նշված սուբյեկտներին: Հայաստանի Հանրապետությունում ևս վերը նշված սուբյեկտներն ընտրվում են ուղղակիորեն՝ ՀՀ քաղաքացիների կողմից: Այս առումով, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ոչ միաժամանակյա ընտրությունների անցկացման և վերջիններիս՝ քաղաքական հակադիր կողմնորոշումների հնարավոր առկայության կապակցությամբ, առկա են կամ կարող են առաջ գալ սահմանադրական հստակ լուծումներ պահանջող որոշ հիմնախնդիրներ: Այսպես, ներկայումս Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրություններն անց են կացվում տարբեր ժամկետներում, ինչի արդյունքում դրանցից յուրաքանչյուրի ընտրություններից հետո, ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան, պետք է կազմավորվի նոր կառավարություն⁵: Մեր Հանրապետության պրակտիկան վկայում է, որ Ազգային ժողովի ընտրություններից հետո նշանակված վարչապետը երկրորդ անգամ է նշանակվել նույն պաշտոնում՝ Հանրապետության Նախագահի ընտրություններից հետո: Հարկ է նշել, որ կառավարության կազմավորման գործընթացը ենթադրում է ոչ միայն վարչապետի, այլև նախարարների նշանակում: Բացի այդ, կառավարությունն իր կազմավորումից հետո պարտավոր է Ազգային ժողով ներկայացնել իր ծրագիրը (Մահմ. հոդ. 74): Ընդ որում, ՀՀ Ազգային ժողովի կողմից կառավարության ծրագրին հավանություն չտալը հանդիսանում է կառավարության հրաժարականի հիմք (Մահմ. հոդ.

⁵ Հանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու... օրը (Մահմ. հոդ. 55, կետ 4):

55, կետ 4): Վերոնշյալն ակներև է դարձնում գործադիր իշխանության համակարգում հնարավոր անկայունության առաջացման հնարավորությունը, ինչը չի կարող ազդեցություն չունենալ պետության քաղաքական ինստիտուտների բնականոն գործունեության, սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացների վրա:

Չպետք է անուշադրության մատնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությամբ հստակ լուծումներ նախատեսված չեն այնպիսի իրավիճակների համար, երբ ժողովրդի կողմից անմիջականորեն ընտրվող Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի միջև առաջ գան հնարավոր քաղաքական հակամարտություններ: Այս կապակցությամբ, չի կարելի բացառել այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ Հանրապետության Նախագահի պաշտոնում ընտրվի խորհրդարանական մեծամասնությանը հակադիր քաղաքական դիրքորոշումներ ունեցող սուբյեկտը: Վերջինիս կողմից իր սահմանադրական լիազորությունների իրականացման հետ կապված կարող են ծագել մի շարք խոչընդոտներ: Օրինակ, մի կողմից, նա ի վիճակի չի լինի կազմավորել նոր կառավարություն, քանի որ սահմանադրական գործող կարգավորումներին համապատասխան, սույն գործընթացում զգալի է խորհրդարանական մեծամասնության դերակատարությունը (Սահմ. հոդ. 55, կետ 4), մյուս կողմից, կբացառվի ՀՀ Նախագահի կողմից Ազգային ժողովն արձակելու հնարավորությունը, եթե առկա չլինեն Սահմանադրությամբ ամրագրված համապատասխան հիմքերը (Սահմ. հոդ. 74.1): Նմանատիպ իրավիճակներում, եթե անգամ կազմավորվի կառավարություն, վերջինս և Հանրապետության Ազգային ժողովն իրենց գործունեության ընթացքում կարող են հանդիպել որոշ խոչընդոտների իրենց լիազորությունների իրականացման մի շարք ոլորտներում: Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՀՀ արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ (հոդ. 85, մաս 1): Ակնհայտ է, որ Հանրապետության Նախագահին հակադիր խորհրդարանական մեծամասնության վստահությունը վայելող կառավարության կազմավորման դեպքում, ՀՀ Սահմանադրության վերը հիշատակված նորմի իրացման գործընթացում առաջ են գալու լուրջ բարդություններ: Առ այսօր նմանատիպ իրավիճակներ չեն առաջացել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Հանրապետության Նախագահն Ազգային ժողո-

վում ունի բացարձակ մեծամասնություն: Հանրապետության Նախագահը և խորհրդարանական քաղաքական մեծամասնությունը քաղաքական միևնույն ուժի ներկայացուցիչներն են, ինչը գրեթե բացառում է վերջիններիս միջև քաղաքական հակամարտությունների առաջացման հնարավորությունը: Այլ կերպ ասած, Հանրապետության Նախագահը խորհրդարանական քաղաքական մեծամասնության առաջնորդն է, ինչով էլ առավելապես պայմանավորված է նրա ազդեցիկ դերակատարությունը քաղաքական գործընթացներում՝ խորհրդարանական գործուն հակակշիռների բացակայությամբ: Այդուհանդերձ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի միջև քաղաքական առճակատման առաջացման հավանականությունը տեսականորեն չի կարելի բացառել:

Որպես նշված հիմնախնդիրների լուծման հնարավոր տարբերակ, կառավարման գործող ձևի բարեփոխման համատեքստում, թերևս, կարելի է դիտարկել Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների միաժամանակյա անցկացման հնարավորությունը՝ բացառելով դրանցից յուրաքանչյուրի ընտրություններից հետո կառավարություն ձևավորելու անհրաժեշտությունը, ինչը նախատեսված է ՀՀ գործող Սահմանադրությամբ (հոդ. 55, կետ 4): Մեր կարծիքով, թե՛ ՀՀ Նախագահի, թե՛ Ազգային ժողովի ընտրություններով պայմանավորված, կառավարություն ձևավորելու՝ Սահմանադրության նորմերի վերանայման արդյունքում որոշակիորեն կհաղթահարվի անկայունությունը գործադիր իշխանության համակարգում՝ դրանից բխող հետևանքներով: Այդուհանդերձ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների նույն օրը կամ միմյանց մոտ ժամկետներում անցկացում նախատեսող սահմանադրական նորմերի ամրագրման արդյունքում վերջնական լուծում չի տրվի գործադիր իշխանության համակարգում հնարավոր անկայունության վերացման խնդրին, ժողովրդի առաջնային մանդատով օժտված, միմյանց հակադիր մարմինների միջև հնարավոր հակամարտություններին: Այս առումով, չի կարելի բացառել համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերոնշյալ մարմիններից մեկի արտահերթ ընտրությունների անցկացման հնարավորությունը, ինչի հետևանքով դրանց ընտրությունների ժամկետների միջև կարող են առաջ գալ զգալի շեղումներ: Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների միաժամանակյա անցկացման

դեպքում սկզբունքորեն չի լուծվի նախագահական մենիշխանության հարցը՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ Հանրապետության Նախագահը քաղաքական պատասխանատվություն չի կրում իր գործունեության համար: Վերջինս կիսանախագահական կառավարման ձևի լրջագույն թերություններից է: Մի կողմից, պետության նախագահը Սահմանադրությամբ օժտված է լայն լիազորություններով, մյուս կողմից՝ իր պաշտոնավարման ընթացքում քաղաքական պատասխանատվություն չի կրում: Սահմանադրությամբ հստակ ամրագրված են նրա պաշտոնավարման ժամկետները: Այսպիսի պայմաններում հաճախ որպես «թիրախ» հանդես է գալիս վարչապետը:

Ներկայումս որպես նշված հիմնախնդրի լուծման տարբերակ դիտարկվում է անցումը կառավարման խորհրդարանական համակարգին⁶: Այս կապակցությամբ, ընդհանուր գծերով ներկայացնելով

⁶ Այս կապակցությամբ, ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում նշված է, որ նշված խնդրի համարժեք լուծումներ կարող են գտնվել կառավարման խորհրդարանական համակարգի ներդրման պայմաններում՝ երկրի քաղաքական ուժերի միջև անհրաժեշտ քաղաքական փոխհամաձայնության պարագայում: «Կառավարության կայունությունն ապահովելու համար պետք է հաշվի առնել ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման փորձը, կայունությանը նպաստող այն միջոցները, որոնք իրենց արդարացրել են միջազգային պրակտիկայում, մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Կայունությանը նպաստող միջոցներ կարող են լինել կոնստրուկտիվ անվստահության քվեն և վարչապետի ուժեղ դերը պետական կառավարման համակարգում: Խորհրդարանի լուծարումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ ճգնաժամային իրավիճակներում Ազգային ժողովն ի վիճակի չէ ընտրել նոր վարչապետ: Գործող կառավարման համակարգի համեմատ, սկզբունքորեն նոր դեր պետք է իրականացնի Հանրապետության Նախագահը, որը պետք է ընտրվի Ազգային ժողովի կամ ավելի լայն ընտրական կալեֆայի կողմից՝ խորհրդարանի լիազորությունների ժամկետը գերազանցող ժամկետով, մասնավորապես՝ քննության առնելով նաև սփյուռքի ներկայացուցիչների ընդգրկումը: Հանրապետության Նախագահը չպետք է ունենա վերընտրման իրավունք, որպեսզի նրա պաշտոնավարման ընթացքում ավելի լիակատար կերպով ապահովվի նրա անկախությունը քաղաքական ուժերից: Նրա հիմնական առաքելությունը պետք է լինի Սահմանադրության պահպանմանը հետևելը, հակակշռող և զսպող լիազորությունների արդյունավետ գործադրումը անհրաժեշտության դեպքում կիրառելով նաև համաստորագրման ինստիտուտը: Հանրապետության Նախագահը պետք է, առաջին հերթին, ստանձնի հաշտարարի ու միջնորդի դեր՝ ունենալով երկրի զարգացման դիմամիկ հավասարակշռությունն ապահովելու կարևոր առաքելություն: Դա համակարգային կայունության ապահովման գործունե երաշխիք կարող է դառնալ» (2.4.3.):

խորհրդարանական կառավարման ձևի բնորոշ գծերը, փորձենք վերհանել դրա առավելություններն ու թերությունները: Այսպես, խորհրդարանական կառավարման ձևին ներհատուկ է պետության գլխի կողմից գուտ ներկայացուցչական գործառույթների իրականացումը: Պետության Նախագահի ակտերը ենթակա են ստորագրման կառավարության, դրանց համար պատասխանատու անդամների, կողմից: Խորհրդարանի կողմից ընդունված օրենքները ստորագրվում են պետության Նախագահի կողմից, սակայն դրանք պետք է նաև ստորագրվեն կառավարության ղեկավարի կամ պատասխանատու նախարարի կողմից⁷: Խորհրդարանական կառավարման ձևի բնորոշ գծերից են գործադիր իշխանության իրականացումը խորհրդարանի կողմից կազմավորված կառավարության կողմից, կառավարության ղեկավարի՝ իշխանական գործուն լիազորություններով օժտված լինելը, որոնք ծավալային առումով կարելի է համեմատության մեջ դնել պետության գլխի լիազորությունների հետ՝ նախագահական կառավարման ձևի պայմաններում, ինչպես նաև կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև, ինչը ենթադրում է, որ խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու արդյունքում վերջինս պետք է հրաժարական տա: Խորհրդարանն, ի դեմս վերջինիս քաղաքական մեծամասնության, փաստացի քաղաքական և բարոյական պատասխանատվություն է կրում իր կողմից ձևավորված կառավարության գործունեության համար, կարող է արձակվել պետության գլխի կողմից, իսկ խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցությունը ընտրությունների արդյունքում կարող է չստանալ այնքան ձայներ, որքան նախորդ ընտրություններում: Խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում կառավարության անդամները կոլեկտիվ կամ անհատական պատասխանատվություն են կրում խորհրդարանի առջև, այլ ոչ

⁷ Իտալիայի սահմանադրության համաձայն՝ Հանրապետության Նախագահի ցանկացած ակտ առջինչ է, էթե այն չի ստորագրվել դրա համար պատասխանատու համապատասխան նախարարների կողմից: Օրենքի ուժ ունեցող և օրենքում նշված այլ ակտերը ստորագրվում են նաև Նախարարների խորհրդի նախագահի կողմից (հոդ. 89):

պետության գլխի, որը խորհրդարանական հանրապետություններում, որպես կանոն, ընտրվում է օրենսդիր մարմնի կողմից⁸:

Խորհրդարանական հանրապետության առավելություններից է իշխանության բարձրագույն օղակների միասնությունը⁹, քանզի գործադիր իշխանության՝ կառավարության ղեկավարի և անդամների նշանակման գործընթացում առանցքային է խորհրդարանի, ավելի ստույգ՝ խորհրդարանական մեծամասնության ղերակատարությունը, խորհրդարանն է վերահսկում դրանց գործունեությունը: Քանի դեռ կառավարությունը վայելում է օրենսդիրների մեծամասնության աջակցությունը, այն բնականոն հունով իրականացնում է իր լիազորությունները: Կորցնելով խորհրդարանական մեծամասնության աջակցությունը՝ կառավարությունը հրաժարական է տալիս: Խորհրդարանական հանրապետություններում Նախագահի ղերակատարությունն էական չէ և, ըստ էության, գործադիր իշխանությունը հանդիսանում է օրենսդիր իշխանության «շարունակությունը»: Դրանով իսկ պետական իշխանության երկու ճյուղերի միջև հակամարտության հավանականությունը հասցվում է նվազագույնի¹⁰: Մյուս կողմից, խորհրդարանական հանրապետության թերություններից է կուսակ-

⁸ Խորհրդարանական կառավարման ձևը ներհատուկ է արևմտաեվրոպական այնպիսի միապետությունների, ինչպիսիք են, Մեծ Բրիտանիան, Դանիան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Շվեդիան, Իսպանիան, ինչպես նաև այնպիսի հանրապետությունների, ինչպիսիք են, Գերմանիան, Իտալիան: Ասիայում խորհրդարանական կառավարման ձևը գործում է, Ճապոնիայում, իսկ Արևելյան Եվրոպայում՝ Հունաստանում: 1990-ական թվականներին խորհրդարանական կառավարման ձևեր հաստատվեցին հետսոցիալիստական և հետխորհրդային մի շարք պետություններում (օրինակ՝ Ալբանիայում, Հունգարիայում, Լատվիայում, Մոլդովայում, Սլովակիայում, Էստոնիայում):

⁹ Գրականության մեջ նշվում է, որ խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում իշխանության տարբեր ճյուղերի միջև առկա են զգալի փոխկապվածություն և փոխկախվածություն, ինչը դրանց միջև պատնեշները դարձնում է պակաս հստակ: Տե՛ս **Черкасов А. И.**, Глава государства и правительство в странах современного мира: конституционно-правовое регулирование и практика, М., 2006, էջ 4:

Խորհրդարանական կառավարման ձևի բնութագրության հետ կապված, երբեմն գործածվում է «իշխանությունների սիմֆոնիա» եզրույթը, որի համաձայն՝ իշխանությունների բաժանումը չպետք է շատ կոշտ լինի: Տե՛ս և, օրինակ, **Васильев А. В.**, Разделение властей: теоретические аспекты и современная практика // Право и государство: теория и практика, М., 2006, N 7, էջ 5:

¹⁰ Տե՛ս **Темпов Е. И.**, Форма государства // Теория права и государства/ Под ред. В. В. Лазарева, М., 1996, էջ 306:

ցական համակարգի մասնատվածությունը, որը կարող է հանգեցնել խորհրդարանական կոալիցիայի համանման մասնատվածության և կառավարության անկայունության: Պետության կուսակցական համակարգի թերգարգացած լինելու պայմաններում անգամ շատ փոքր կուսակցությունները կարող են դառնալ խորհրդարանական մեծամասնություն կազմող կոալիցիայի մասնիկը, ինչը կարող է ոչ պակաս կործանարար լինել, քան փակուղին օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերություններում: Այդպիսի պայմաններում միանգամայն իրական է դառնում բռնակալական իշխանության վտանգը, որն ունակ է ստեղծել խորհրդարանական պարզ մեծամասնությունը: Այսինքն՝ խորհրդարանական կառավարման ձևի արդյունավետությունը և կայունությունը կախված են խորհրդարանում ներկայացված լինելու մրցապայքարին ներգրավված քաղաքական կուսակցությունների «բնույթից»¹¹: Քննարկվող հիմնախնդրի համատեքստում, ուշադրության է արժանի Գերմանիայի Դաշնային Հանրապետության փորձը, որտեղ Կառավարության ղեկավարին (Կանցլերին) ընտրում է նորընտիր խորհրդարանի ստորին պալատը (Բունդեսթագը)՝ դաշնային Նախագահի առաջարկությամբ: Բունդեսթագի անդամների ձայների բացարձակ մեծամասնությունը ստացած թեկնածուին Գերմանիայի Նախագահը նշանակում է Կառավարության ղեկավարի պաշտոնում: Իսկ եթե Նախագահի կողմից առաջադրված թեկնածուն չի ստանում անհրաժեշտ թվով ձայներ, ապա Բունդեսթագն է իրավասու հաջորդ երկու շաբաթների ընթացքում առաջադրել և ընտրել Կանցլերին՝ անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Նշված դեպքում Նախագահը պարտավոր է ընտրված թեկնածուին նշանակել Կանցլերի պաշտոնում: Եթե Բունդեսթագի առաջադրած թեկնածուն հավաքել է դրա անդամների հարաբերական մեծամասնության ձայները, ապա Նախագահը կարող է կամ նրան նշանակել Կանցլերի պաշտոնում կամ էլ արձակել Բունդեսթագը¹²: Այսպիսով, կարելի է փաստել, որ միայն այն դեպքում, երբ խորհրդարանի ստորին պալատում չկա քաղաքական հստակ մեծամասնություն, Նախագահը կարող է արձակել այն: Կարծում ենք, նման մոդելի

¹¹ Տե՛ս նույն տեղում: Խորհրդարանական հանրապետությունների առավելություններն ու թերությունները նույն կերպ է բնութագրում Մ. Բ. Ագալը: Տե՛ս **Агаев М. Б.**, Президентская власть в системе государственной власти. М., 1994, էջ 70-71:

¹² Տե՛ս Основной Закон Федеративной Республики Германия от 23.05.1949, հոդ. 63:

ընտրության պայմաններում անցումը կառավարման խորհրդարանական համակարգի պարտադիր չէ:

Ինչպես վերը նշվեց, կիսանախագահական կառավարման ձևին ներհատուկ է նաև գործադիր իշխանության համատեղ իրականացումը պետության նախագահի և կառավարության կողմից, ինչպես նաև կառավարության երկակի պատասխանատվությունը պետության նախագահի և օրենսդիր մարմնի առջև¹³: Այս առումով նա, Հայաստանի Հանրապետությունում գործող սահմանադրական կարգավորումները հստակ չեն և բարելավման կարիք ունեն: Մասնավորապես, առկա է անհստակություն գործադիր իշխանության գործառնության դերի, իրավասության և պատասխանատվության միջև: Գործադիր իշխանության ներքին երկվությունը՝ պայմանավորված Հանրապետության Նախագահի և կառավարության գործառնության լիազորություններով, բավարար չափով հստակեցված չէ, ինչի արդյունքում կառավարությունն ամբողջական ու համալիր պատասխանատվությամբ չի իրականացնում գործադիր իշխանությանը բնորոշ գործառնությունները¹⁴: Կառավարության երկակի պատասխանատվությունը սահմանվել է Ֆրանսիայի 1958 թվականի Սահմանադրությամբ, որտեղ կառավարությունը համալիր պատասխանատվություն է կրում պետության Նախագահի և օրենսդիր մարմնի առջև: Կառավարության լիազորությունները կարող են դադարեցվել Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում, ինչը կարող է տեղի ունենալ ինչպես կառավարության նախաձեռնությամբ, երբ վերջինս է խորհրդարանի ստորին պալատում դնում իր վստահության հարցը, այնպես էլ Ազգային ժողովի նախաձեռնությամբ՝ քվեարկության դնելով կառավարությանն անվստահություն հայտնելու մասին բանաձևը (Սահմ. հոդ. 49): Վերոնշյալ երկու դեպքերում էլ վարչապետը պարտավոր է Հանրապետության Նախագահին ներկայացնել դիմում՝ կառավարության հրաժարականի մասին (հոդ. 50):

¹³ Տե՛ս, օրինակ, **Мишин А. А., Барабышев Г. В.**, Голударственное право буржуазных и развивающихся стран, М., 1989, էջ 145, **Малько А. В.**, Теория государства и права, М., 2006, էջ 58, **Григонис Э. П.**, Теория государства и права, СПб., 2002, էջ 66:

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, 2.4.1.6:

Նմանատիպ կարգավորումներ են նախատեսված նաև ՀՀ Սահմանադրությամբ: Սակայն, եթե մեր Հանրապետությունում Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում ՀՀ Նախագահը, ըստ էության, պարտավոր է ընդունել կառավարության հրաժարականը (Սահմ. հոդ. 55, կետ 4), ապա Ֆրանսիայի Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին չի պարտավորեցնում ընդունել կառավարության հրաժարականը: Նախագահն իրավասու է չհամաձայնվել օրենսդիրների կողմից կառավարությանն անվստահություն հայտնելուն և գործադրել Ազգային ժողովն արձակելու իր սահմանադրական իրավունքը¹⁵:

Հարկ է նշել, որ կիսանախագահական կառավարման ձևի նախագահական-խորհրդարանական մոդելի պայմաններում պետության նախագահի կողմից խորհրդարանն արձակելու սահմանադրական լիազորության գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքը լրջագույնս խոչընդոտում է կառավարությունների հաճախակի փոփոխությանը, ինչն, իր հերթին, նպաստում է գործադիր իշխանության համակարգում կայունության պահպանմանը, հետևաբար՝ պետության ներսում քաղաքական իրադրության, սոցիալ-տնտեսական վիճակի կայունությանը: Միաժամանակ, չպետք է անուշադրության մատնել այն հանգամանքը, որ կառավարման վերոնշյալ մոդելի պայմաններում գործադիր իշխանությունը հաճախ գերկենտրոնաց-

¹⁵ Օրինակ՝ նախագահ Ժ. Պոմպիդուն, Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելուց հետո, արձակեց խորհրդարանի ստորին պալատը՝ նախարարների մեծ մասին թողնելով իրենց պաշտոններում: Տե՛ս **Арановский К. В.**, Государственное право зарубежных стран, М., 1998, էջ 162:

Բելառուսի Սահմանադրությամբ ամրագրված է, որ կառավարությունն իր գործունեության ընթացքում հաշվետու է Հանրապետության Նախագահին և պատասխանատու է Հանրապետության խորհրդարանի առջև (հոդ. 106): Ինչպես և Ֆրանսիայում, Բելառուսի Սահմանադրությամբ նախատեսված է խորհրդարանի ստորին՝ Ներկայացուցիչների պալատի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու, ինչպես նաև Հանրապետության վարչապետի կողմից խորհրդարանի ստորին պալատում կառավարության վստահության հարցը դնելու հնարավորությունը (հոդ. 97, 106): Խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում, վերջինս Հանրապետության Նախագահին հայտարարում է իր հրաժարականի մասին: Եթե կառավարությունը վստահության քվե չի ստանում, ապա Հանրապետության Նախագահն իրավասու է 10-օրյա ժամկետում որոշում կայացնել կառավարության հրաժարականի կամ խորհրդարանի ստորին պալատն արձակելու մասին: Հրաժարականի մերժման դեպքում կառավարությունը շարունակում է իրականացնել իր լիազորությունները:

վում է պետության նախագահի ձեռքերում¹⁶: Ինչպես վերը նշվեց, կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում կառավարության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է պետության նախագահը, իսկ անմիջական ղեկավարումը՝ կառավարության ղեկավարը: Այլ խոսքերով՝ պետության նախագահը և կառավարությունը համատեղ են իրականացնում գործադիր իշխանությունը, կիսում այն: Դա վկայում է այն մասին, որ կիսանախագահական հանրապետություններում տեղի է ունենում իշխանությունների յուրօրինակ «խորքային» բաժանում գործադիր իշխանության մարմինների միջև: Այս առումով, իրավաբանական գրականության մեջ գործածվում է «բիցեֆալիզմ» եզրույթը¹⁷: Հարկ է նկատել, որ մինչև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածով ուղղակիորեն ամրագրված էր, որ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը իրականացնում է ՀՀ կառա-

¹⁶ Ֆրանսիայում պետության նախագահն ազդեցիկ դերակատարություն ունի ոչ միայն կառավարության կազմավորման, այլև՝ վերջինիս գործունեության ոլորտներում: Մասնավորապես, նա կարող է հրավիրել և վարել կառավարության նիստերը: Ֆրանսիայի նախագահի նախագահությամբ նախարարների խորհրդի նիստերում լուծվում են առավել կանոն հարցերը, իսկ վարչապետի նախագահությամբ կարինետի խորհրդի նիստերում՝ երկրորդական, օպերատիվ լուծում պահանջող, ընթացիկ հարցերը: Տե՛ս **Чиркин В. Е.**, Основы сравнительного государственного права, М., 1997, էջ 259:

Այդ կապակցությամբ, գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ «վարչապետը ղեկավարում է նվազախումբը, իսկ երաժշտությունը գրում է նախագահը»: Տե՛ս **Черкасов А. И.**, Конституционные модели исполнительной власти // Сравнительное конституционное право М., 1996, էջ 603:

ՀՀ Նախագահը 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում այլևս օժտված չէ կառավարության նիստերի հրավիրման և վարման, կառավարության որոշումների վավերացման լիազորություններով, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի (հոդ. 86, մաս 2, հոդ. 88.1), ինչպես նաև ՀՀ վարչապետին զբաղեցրած պաշտոնից ազատելու լիազորությամբ: Նա կարող է Ազգային ժողով ներկայացնել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ (Սահմ. հոդ. 84, մաս 2): Մինչդեռ, Բելառուսի Հանրապետության Նախագահն իրավասու է սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել կառավարության հրաժարականի մասին (Սահմ. հոդ. 106): Այդպիսի լիազորությամբ է օժտված նաև Ռուսաստանի Դաշնության Նախագահը (Սահմ. հոդ. 117):

¹⁷ Նշված եզրույթը ծագում է հունական «բի», այսինքն՝ երկու և «ցեֆալե», այսինքն՝ գլուխ բառերից: Տե՛ս, օրինակ, **Эттин Л. М.**, Разделение властей: опыт современных государств, М., 1996, էջ 35:

վարությունը (հոդ. 85, մաս 1)¹⁸: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում սույն դրույթը հանվեց Սահմանադրության տեքստից: Այդ կապակցությամբ, հարկ է նշել, որ նախ՝ պետական իշխանության մյուս երկու թևերի հետ կապված, սահմանադրական կարգավորումները հստակորեն մատնանշում են դրանց հասցեատերերին¹⁹: Բացի այդ, իշխանությունների բաժանման համակարգում գործադիր իշխանության իրավական կարգավիճակի ոչ բավարար հստակության մասին են վկայում ՀՀ Սահմանադրության մի շարք նորմեր: Այսպես, օրինակ, ՀՀ արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ (հոդ. 85, մաս 1): Դրա հետ մեկտեղ, արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ Նախագահը (հոդ. 55, կետ 7): ՀՀ կառավարության և դրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանված է Հանրապետության Նախագահի հրամանագրով²⁰ (հոդ. 85, մաս 6): Մեր համոզմամբ, սահմանադրական այսպիսի կարգավորումը կարիք ունի վերանայման՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման կառուցակարգերի իրացման արդյունավետության ապահովման, իշխանությունների բաժանման համակարգում գործադիր իշխանության ինքնուրույնության ամրապնդման տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել Հանրապետության Նախագահը (հոդ. 86, մաս 2), իսկ ՀՀ պաշտպանության, ազգային ան-

¹⁸ Այդպիսի նորմեր են բովանդակվում, օրինակ, Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություններում (համապատասխանաբար՝ հոդ. 106, 110):

¹⁹ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը (Սահմ. հոդ. 62, մաս 1), արդարադատությունը՝ միայն դատարանները (Սահմ. հոդ. 91, մաս 1), իսկ սահմանադրական արդարադատությունը՝ Սահմանադրական դատարանը (Սահմ. հոդ. 93): Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրության դատական իշխանությանը վերաբերող գլխում տեղ են գտել նաև Սահմանադրական դատարանին և ՀՀ դատախազությանը վերաբերող նորմեր:

²⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի 18.07.2007 թվականի ՆՀ-174-Ն հրամանագիրը, որի որոշ կետեր (օրինակ՝ 7, 8, 16, 17), մեր կարծիքով, խնդրահարույց են:

վտանգության և արտաքին քաղաքականության իրականացումն ապահովում է կառավարությունը (Սահմ. հոդ. 89, կետ 6): Հատկանշական է, որ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերին վերաբերող իրավական ակտերի նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են ՀՀ Նախագահի և Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմեր՝ կարծիքի: Վերը թվարկված հարցերով ՀՀ Նախագահի կողմից կարող են փոփոխություններ կատարվել կառավարության նիստի օրակարգում: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությանն առընթեր առանձին մարմինների ղեկավարներին, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում ՀՀ Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Հանրապետության Նախագահն է պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալներին: Իսկ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալները պաշտոնի են նշանակվում և պաշտոնից ազատվում Հանրապետության Նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ: ՀՀ արտաքին գործերի նախարարության սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի նախագահին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը²¹:

ՀՀ Սահմանադրության վերը նշված և մի շարք այլ հոդվածների (հոդ. 86, մաս 4, հոդ. 88.1, մաս 1 և այլն), ինչպես նաև իրավական այլ ակտերի դրույթների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ թեև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում որոշակիորեն սահմանափակվեցին Հանրապետության Նախագահի լիազորությունները գործադիր իշխանության ոլորտում, այդուհանդերձ, սահմանադրաիրավական գործող կարգավորումները թույլ չեն տալիս խոսել ՀՀ կառավարության որպես գործադիր իշխանության բարձրագույն կոլեգիալ մարմնի ինքնուրույնության մասին: Ու թեև ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածը Հանրապետության Նախագահին դուրս է դատում պետական իշխանության երեք թևերից, նրան վերապահելով դրանց բնականոն գործունեությունն ապահովելու, ըստ էության, իրավարար գործառույթ, սակայն ակներև է, որ Հանրապետության Նախագահը ազդե-

²¹ Տե՛ս նույն տեղում, կետեր 41, 71, 124, 125:

ցիկ դերակատարություն ունի ինչպես գործադիր իշխանության մարմինների կազմավորման, այնպես էլ դրանց գործունեության կազմակերպման, իրավասության իրացման գործընթացներում²²:

Որպես քննարկվող հիմնախնդիրների լուծման հնարավոր տարբերակներ, մեր կարծիքով, կարելի է դիտարկել կառավարման խորհրդարանական համակարգին առավել մոտ խառը կառավարման ձև ունեցող արևելաեվրոպական որոշ պետություններում գործող սահմանադրական կարգավորումները: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի, օրինակ, Բուլղարիայի փորձը: Այսպես, Բուլղարիայի Սահմանադրությամբ խորհրդարանն է ընտրում և զբաղեցրած պաշտոնից ազատում կառավարության ղեկավարին և վերջինիս առաջարկությամբ՝ կառավարության անդամներին, ինչպես նաև կառավարության ղեկավարի առաջարկությամբ կառավարության կազմում կատարում փոփոխություններ: Բուլղարիայի Սահմանադրությամբ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև: Կառավարության պատասխանատվությունը Հանրապետության Նախագահի առջև Սահմանադրությամբ նախատեսված չէ: Բացի այդ, նախարարությունները ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են օրենսդիր մարմնի կողմից կառավարության ղեկավարի առաջարկությամբ: Դրա հետ մեկտեղ, Բուլղարիայի Նախագահը կառավարության կազմավորման գործընթացում ունի յուրահատուկ լիազորություններ: Մասնավորապես, Նախագահը, խորհրդարանական խմբերի հետ խորհրդակցելուց հետո ըստ դրանց մեծության հաջորդականության, խորհրդարանական խմբերի կողմից առաջադրված կառավարության ղեկավարի պաշտոնի թեկնածուներին հանձնարարում է կազմավորել կառավարություն: Եթե այդ կապակցությամբ խորհրդակցությունների համար նախատեսված ժամանակահատվածը «հաջողությամբ» է ավարտվում, ապա Նախագահն առաջարկում է խորհրդարանին առաջադրված թեկնածուին ընտրել կառավարության ղեկավարի պաշտոնում: Իսկ եթե կառավարության

²² Գործադիր իշխանության գործառնության երկատվածությունը հնարավորինս հաղթահարելու անհրաժեշտությունն ընդգծված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում: Ըստ այդմ՝ գործադիր իշխանության գործառնության լիազորություններով պետք է օժտված լինի կառավարությունը՝ Հանրապետության Նախագահին վերապահելով պետության գլխին բնորոշ ու ամբողջական գերազանցապես հակակշռող և զսպող լիազորություններ (2.4.2.4):

կազմավորման հարցի շուրջ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա Նախագահը նշանակում է ծառայողական կառավարություն և արձակում Ազգային ժողովը²³: Այսպիսով, կարելի է փաստել, որ նշված դեպքում օրենսդիր մարմինն արձակվում է բացառապես այն դեպքում, երբ վերջինս ի վիճակի չի լինում կազմավորել կառավարություն, ինչը միանգամայն տրամաբանական է իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի պահպանման և քաղաքական տևական ճգնաժամերից խուսափելու նկատառումներով:

Մեր կարծիքով, կառավարման այս կամ այն ձևին նախապատվություն պետք է տրվի՝ հաշվի առնելով ոչ միայն դրա ժողովրդավարական բնույթը, այլև՝ այն հանգամանքը, թե կոնկրետ պետությունում քաղաքական ինստիտուտները որքանով են կենսունակ և ինչ մակարդակի վրա են գտնվում սահմանադրական ու քաղաքական մշակույթները²⁴: Առանց վերը նշված գործոնները հաշվի առնելու, բացա-

²³ Ст 4 у Конституция Республики Болгария (обнародована в «Държавен вестник», бр. 56 от 13 июля 1991 г.), հոդ. 84, 89, 99, 112:

Խորհրդարանական կառավարման ձևին առավել մոտ են նաև Մակեդոնիան, Ռումինիան և Սլովենիան: Նշված պետություններին ներհատուկ են կիսանախագահական հանրապետության լոկ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են պետության Նախագահի համաժողովրդական ընտրությունները և կառավարության կազմավորումը՝ Նախագահի և խորհրդարանի կողմից՝ համատեղ:

²⁴ Այս կապակցությամբ, գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունում խորհրդարանական և նախագահական կառավարման ձևերի միջև սկզբունքային տարբերություններ չկան: Դրանց մերձեցնում են հասարակական կյանքի առավել արդյունավետ կազմակերպման, անհատի երաշխավորված ազատ զարգացման ապահովման, նրա իրավունքների և շահերի հուսալի պահպանման ընդհանուր խնդիրները և նպատակները: Ст у **Хропанюк В. Н.**, Теория государства и права, М., 2006, էջեր 112-113:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ մի կողմից, հարցադրումը, թե կառավարման ձևերից որն է հանդիսանում լավագույնը՝ առանց հաշվի առնելու կոնկրետ պետության առանձնահատկությունները, կոռեկտ չէ: Ժողովրդավարական քաղաքական ռեժիմի, իշխանությունների բաժանման գործուն համակարգի առկայության պայմաններում խորհրդարանական և նախագահական կառավարման ձևերի միջև տարբերությունները սկզբունքային նշանակություն չունեն: Այդպիսի պետություններում իրավական պետության կառուցակարգը գործում է հավասարաչափ: Հակաժողովրդավարական քաղաքական ռեժիմի, իշխանությունների իրական բաժանման բացակայության պայմաններում պաշտոնապես հոչակված կառավարման ձևը նշանակություն չունի: Մյուս կողմից, նախագահական հանրապետությունն Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ինչպես նաև խորհրդարանական կառավարման ձևերը Արևմտյան Եվրոպայի բազմաթիվ պետություններում ներկայումս հանդիսանում են կայացած և արդյունավետ գործող:

ռապես միջազգային փորձի վրա հիմնվելով՝ պետության կառավարման ձևի փոփոխությունն, ըստ էության, ինքնանպատակ է և չի կարող հանգեցնել շոշափելի արդյունքների հասարակության և պետության կենսագործունեության ոլորտներում: Այս կապակցությամբ, Հայաստանի Հանրապետությունում կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու նպատակահարմարության հարցը քննարկելիս, կարծում ենք, չպետք է անտեսել այնպիսի գործոններ, ինչպիսիք են երկրում սահմանադրական, քաղաքական, կուսակցական մշակույթի ոչ բավարար կայացվածությունը, կուսակցական համակարգի կայացած չլինելը, դրա խիստ անձնավորված լինելը, քաղաքական հստակ գաղափարախոսություն չունեցող մեծաթիվ կուսակցությունների առկայությունը, խորհրդարանի՝ որպես պետության բարձրագույն օրենսդիր ներկայացուցչական մարմնի հեղինակության ոչ անսասան լինելը, խորհրդարանական ավանդույթների բավարար չափով արմատավորված չլինելը:

Мери Саргсян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

НЕОБХОДИМОСТЬ РЕФОРМЫ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ РА В КОНТЕКСТЕ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ КОНСТИТУЦИОННЫХ МЕХАНИЗМОВ РАЗДЕЛЕНИЯ И СБАЛАНСИРОВАНИЯ ВЛАСТЕЙ

Для правильного восприятия реализации принципа разделения и сбалансирования властей в конкретном государстве необходимым условием является выдвигание систематизированных решений по результатам исследования его формы правления. Форма правления в Республике Армения в настоящее время в рамках действующих конституционных регулирований, на наш взгляд, не обеспечивает эффективную реализацию закрепленного Конституцией принципа разделения и сбалансирования властей, что обусловлено целым рядом объективных и субъективных факторов. В связи с этим, учитывая, что в

Նշված պետություններում, թերևս, չարժե սպասել կառավարման ձևերի փոփոխություն, անգամ՝ հեռավոր ապագայում: Մինչդեռ մի շարք պետություններում, այդ թվում՝ եվրոպական, դա միանգամայն հնարավոր է՝ ելնելով կոնկրետ սոցիալ-քաղաքական պայմաններից: Ընդ որում, կառավարման մի ձևից ուղղակի անցումը մյուսին չափազանց բարդ է: Ուստի՝ ժամանակակից բազմաթիվ պետություններ նախընտրում են խառը կառավարման ձևերը: Տե՛ս **Григонис Э. П.**, Механизм государства (теоретико-правовой аспект), Дис... д-ра юрид. наук. СПб., 2000, էջ 196-198:

контексте предстоящих конституционных реформ в РА акцент ставится на улучшение действующей формы правления и, в качестве альтернативы, целесообразность перехода к парламентской форме правления, мы попытались проанализировать преимущества и недостатки полупрезидентской и парламентской форм правления и, с учетом современных тенденций конституционного развития в ряде зарубежных стран, связанных с предметом изучения, предложить возможные решения.

Mary Sargsyan

PhD student of the YSU Chair of Constitutional Law

THE IMPERATIVE OF REFORMATION OF THE RA GOVERNMENT SYSTEM IN THE CONTEXT OF IMPROVING THE EFFECTIVENESS OF CONSTITUTIONAL STRUCTURES BY CHECKS AND BALANCES OF THE POWERS

Promotion of systemized solutions is an indispensable condition for relevant comprehension of implementation of the principle of checks and balances in a certain state. The existing system of government of the Republic of Armenia in the frames of the current constitutional regulations, to our opinion, conditions with a number of subjective and objective factors, which does not permit effective implementation of the principle of checks and balances of powers subscribed by the Constitution. Due to this, taking into consideration the fact that in the context of forthcoming amendments, improvement of the current system of government and, as alternative appropriateness of transition to the parliamentary system of government, is highlighted, we have tried to analyze the privileges and shortcomings of semi-presidential and parliamentary government systems and have taken into consideration the present tendencies of the constitutional developments connected with the discussed subject in a number of foreign states.

Բանալի բառեր՝ *Շիսանախազահական կառավարման ձև, խորհրդարանական կառավարման ձև, իշխանությունների բաժանում և հավասարակշռում, սահմանադրական բարեփոխումներ, Շառավարություն, գործադիր իշխանություն, քաղաքական պատասխանատվություն:*

Ключевые слова: *Полупрезидентская форма правления, парламентская форма правления, разделение и сбалансирование властей, конституционные реформы, Правительство, исполнительная власть, политическая ответственность.*

Key-words: *Semi-presidential system of government, parliamentary system of government, checks and balances of power, constitutional reforms, Government, executive power, political responsibility.*